Ս. ՍԱՐԳԻՍ ՋՈՐԱՎԱՐԻ ՏՈՆԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 7-ին, երիտասարդների օրհնության օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Արարատյան Հայրապետական և Արագածոտնի թեմերի երիտասարդաց միությունների ու Երևանի հայորդյաց տների շուրջ 350 սաների հետ: Վեհափառ Հայրապետը ողջունեց երիտասարդներին՝ ուրախություն հայտնելով, որ օրեցօր նոր անդամներ են ներգրավվում Հայ Եկեղեցու երիտասարդաց շարժման մեջ:

«Մեր Եկեղեցին զորավոր կլինի այնքանով, որքանով մեր երիտասարդությունը զգա Եկեղեցու ներկայությունն իր հոգուց ներս, երբ զգա, որ Եկեղեցու առաքելությունը նույնացած է իրենց կյանքի առաքելության հետ»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև երիտասարդներին հուզող խնդիրներին ու այն մարտահրավերներին, որոնց առջև կանգնած են նրանք:

«Այսօր վտանգի առջև է մեր երիտասարդությունը. այդ վտանգն անհավատությունն է, անտարբերությունը հավատքի նկատմամբ, այդ վտանգը զվարճանքի և հաճույքի, Քրիստոսի պատվիրանների վրա չխարսխված կյանքի հրապույրներն են, դրսից ներթափանցող նոր արժեքային ընկալումներն են, որոնք որ գալիս են մեր Եկեղեցու զավակներին հեռացնելու իրենց հայրերի սուրբ հավատքից ու հայրենական արժեքների ընկալումից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը պատասխանեց նաև երիտասարդների բազում հարցերին և մաղթեց, որպեսզի Ս. Սարգիսն ունկնդիր լինի իրենց խնդրանքներին և բարեխոսի Բարձրյալն Աստծո առաջ:

Հանդիպմանը ներկա էին Արագածոտնի թեմում Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբդ. Տոնիկյանը, Հայորդյաց տների հոգևոր տեսուչ Տ. Խաղ քհն. Ղազարյանը և Տ. Տաճատ քհն. Դավիդյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ